# ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆԸ

ԱՇՈՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*XVIII դ. ռուս-հայկական մշակութային հարաբերություններում ուրույն տեղ է գրավում Լազարյան տոհմի գործունեությունը։ Լազարյաններին նվիրված մենագրություններում*[1] *մեծ ուշադրություն է հատկացվել նրանց լուսավորական ձեռնարկումներին, արդյունաբերության բնագավառում ունեցած ակտիվությանը, աղգային-ազատագրական պայքարին բերած նպաստին և այլն։ Լազարյանների բազմակողմանի հետաքրքրությունների մեջ կարևոր է նաև մետաքսի արտադրության բնագավառը։ Այս հարցին անդրադարձող մասնագետներին Լազարյանների մետաքսագործական ֆաբրիկան հետաքրքրել է զուտ ռուսական արդյունաբերության տեսակետից։ Սակայն շատ ավելի լայն շրջանակներ է ընդգրկում այս ֆաբրիկան, որի արտադրանքը նշանակալից դեր է խաղացել ռուսական կենցաղի բազմաթիվ բնագավառներում, որոշակի ճաշակ և հետաքրքրություն ձևավորելով արևելյան մետաքսի նկատմամբ։*

*Ռուսաստանում մետաքսագործական ֆաբրիկաների ակտիվ զարգացումը կապված է Պետրոս Մեծի տնտեսական հեղաշրջումների հետ։ Այդ ժամանակ հիմնադրված մետաքսի ֆաբրիկաների զգալի մասը կենտրոնացված էր Մոսկվայում և մերձմոսկովյան շրջաններում, հավանաբար, սպառման շուկայի մոտիկության պատճառով։ Ժամանակի կարևորագույն ֆաբրիկաներից էին 1714 թ. Ա. Միլյուտինի հիմնած ֆաբրիկան, 1729 թ. հայազգի Իվան Գրիգորեի՝ մետաքսը ոսկեթելի և արծաթաթելի հետ մանելու, 1740 թ. Անդրեևսկի վանքի մոտ (Յաուզա գետի վերին հոսանքում) Պետերբուրգի բնակիչ Լուկա (Ղուկաս) Շիրվանովի և մոսկովյան վաճառական Վասիլի Խաստատովի (վավերագրերում հիշատակվում է նաև Մակարով անվամբ) մետաքսի*[2]*, 1742 թ. հայազգի Ստեփան Մաքսիմովիչ Խալդարովի (Ստեփան Մաքսիմով) և Նիկոլայ Իվանովի ֆաբրիկաները։ 1745 թ. նույն Ստեփան Խալդարովը հիմնում է առանձին ֆաբրիկա, որն արտադրում էր ոսկեթել և արծաթաթել կտորներ, միագույն հարթ մետաքսներ և այլն։ 1760 թ. Վ. Խաստատովի ֆաբրիկայի արտադրած կտորեղենը ամենաթանկն էր ու վաճառվում էր Իտալիայում, ինչպես նաև՝ Կ. Պոլսում*[3]*։ 1760 թ. Մոսկվայում, Պրեսնյա թաղամասի ետևի մասում, Վրացական սլոբոդայում մեծ գործ է սկսում հայազգի Ֆիտոնովը*[4]*։ 1717 թ. Պետրոս Մեծի հատուկ հրամանով և պետական դրամական օժանդակությամբ մետաքսագործական ֆաբրիկա են հիմնում գաղտնի խորհրդականներ Պ. Շաֆիրովը, Պ. Տոլստոյը և կոմս Ֆ. Ապրակսինը։ Երեք տարի անց այս ֆաբրիկայի փայատերերն են դառնում ևս հինգ հոգի, որոնց թվում՝ նորջուղա-*

---

1 Վ. Դիլոյան, *Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966,* А. Базинянц, Над архивами Лазаревых, М., 1982.

2 Центральный государственный архив древних актов (далее—ЦГАДА), ф. 277, оп. 2, ед. хр. 646, 650, 667, 692, 723, 772.

3 ЦГАДА, 646, 650.

4 *1759 թ. Մոսկվայի մետաքսագործական ֆաբրիկատերերի թվում հիշատակվում են հայազգի Իվան Միրիմանը, որի ֆաբրիկան արտադրում է մետաքսե կտորներ ու ժապավեններ (նույն տեղում,* ед. хр. 634), *ինչպես նաև Ստեփան Տիկրյանովը (նույն տեղում,* ед. хр. 629), *«Միկիտայ Վասիլիե Ափէլովը»—անունը Մելիք է* (ЦГАДА, ед. хр. 623)։

յեցի Իգնատ Ֆրանցև Շերիմանը[5]։ 1724 թ. ֆաբրիկայի հիմնադիրները դուրս են գալիս ընկերությունից, իսկ Իգնատ Շերիմանն իր փայատիրական մասը մեկ տարի անց տեղափոխում է Մոսկվայի մարզի Ֆրյանովո գյուղը[6]։ 1758 թ. հուլիսի 17-ին նրա որդի Զաքար Շերիմանը Ֆրյանովոյի ֆաբրիկան վաճառում է Եղիազար և Պետրոս Լազարյաններին (Պետրոսը Եղիազարի հորեղբոր տղան էր, Սաֆարի որդին)։ 1776 թ. այն միայն Եղիազարն էր տնօրինում, որն իր մահից երեք տարի առաջ՝ 1779 թ., ֆաբրիկան կտակում է Հովհաննես (Իվան) որդուն[7]։

Ռուսական մանուֆակտուրայի պատմությանը գիտակ Պ. Լյուբոմիրովը գտնում է, որ հայրենական մետաքսագործական արդյունաբերության նախաձեռնողներն ու ղեկավարները ռուս և հայ վաճառականներն էին[8]։ Եվ իրոք, 1760-ական թվականներին Մոսկվայում մետաքսի քսան ֆաբրիկա կար, որից չորս խոշորագույնները պատկանում էին հայերին[9]։

Սկզբնական շրջանում Ռուսաստանի մետաքսագործական ֆաբրիկաների համար մասնագետներ էին հրավիրվում դրսից։ Նախասիրությունը տրվում էր հայերին։ Այսպես՝ Ալեքսեյ Միլյուտինը սենատից պատվոգիր է ստանում մետաքսե ժապավեններ արտադրելու համար (1718 թ.)։ Այս առիթով գրած իր բացատրականում նա նշում է, որ հայ վարպետ է հրավիրել, նրան տվել է 300 ռ. դրամ, սնունդ, իսկ նա կած է պատրաստել, ներկել է և վեց մարդու սովորեցրել իր գործը[10]։ Ռուսաստանի գործվածքների ֆաբրիկայում աշխատելու համար Ֆրանսիայից գալիս են ռուս Ավդոտյա Նիկիֆորովնան և նրա ամուսինը՝ հայազգի Ստեփան Գարարինը[11]։

Մոսկվայի մարզի Բոգորոդսկի գավառի Ֆրյանովո գյուղի (այժմ՝ Նույնանում գյուղը Շչոլկովոյի շրջանում) մետաքսագործական ֆաբրիկան կարճ ժամանակում դարձավ Մոսկվայի Նույնանման առաջնակարգ յոթ ձեռնարկություններից ամենալավագույնը[12]։ Լազարյանների մետաքսագործական ֆաբրիկան կահավորված էր ժամանակի ամենաբարձր տեխնիկական հարմարանքներով, որի հիմքը դրվել էր դեռևս Զաքար Շերիմանի ժամանակ (1753 թ.)։ Լազարյանների ֆաբրիկան ուներ կատարելագործված 116 հաստոց (ավելի ուշ՝ 125), որոնցից յուրաքանչյուրում 640 թելակոճ կար։ Դրանք շարժման մեջ էին դրվում ջրով աշխատող անիվով[13]։ Այդ մասին Հ. Լազարյանը հատուկ նշում է նաև Մանուֆակտուր-կոլեգիային գրած իր հաշվետվության մեջ. «մետաքսի անիվները ջրով են աշխատում, ինչպես Եվրոպայում»[14]։ Ֆաբրիկայի բանվորների թիվն անցնում էր 450-ից, իսկ սարքավորումներով այն

---

5 Ստորագրում է «Շէրիմէնց» (ЦГАДА, ед. хр. 640)։

6 «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», (далее—«Собрание актов...»), М., ч. III, 1938, с. 468. Михаил Чулков. Историческое описание Российской коммерции при всех портах и границах..., т. VI, кн. III, М., 1786, с. 614.

7 ЦГАДА, ф. 277, оп. 2, ед. хр. 644, с. 66 и об., ед. хр. 695, 716, 714.

8 П. Г. Любомиров, Шелкоткацкая промышленность в России в середине XVIII века («Ученые записки Саратовского государственного университета имени Н. Г. Чернышевского», т. VI, Саратов, 1929, с. 132).

9 И. И. Коган, Московские шелковые фабрики первой половины XVIII в. («Старая Москва», 1, М., 1929, с. 132—133).

10 «Собрание актов...», М., ч. I, 1833, с. 536.

11 Նույն տեղում, էջ 365։

12 Լազարյանների Ֆրյանովոյի մետաքսագործական ֆաբրիկային վերաբերող բազմաբնույթ գործեր պահպանվել են Մոսկվայի հին ակտերի կենտրոնական պետական արխիվի (ЦГАДА, № 277, 1252, 19) և Լենինգրադի ՍՍՀՄ պետական կենտրոնական արխիվի (ЦГИА СССР, № 880, 18) ֆոնդերում։

13 И. И. Коган, նշվ. աշխ., էջ 135։

14 П. Г. Любомиров, նշվ. աշխ., էջ 128։

առաջինն է համարվել Ռուսաստանում[15]։ Անհրաժեշտ հումք-մետաքսը հայ վաճառականները բերում էին Դիլանից, Շեմախիից և Չինաստանից։ Ներմուծում էին նաև փոքր քանակությամբ իտալական մետաքս, որը խառնվում էր իրանականին։ Լազարյանների ֆաբրիկայի վարպետները անվանվում էին ըստ արտադրանքի տեսակի՝ շտոֆնի, տաֆտյանոյ, գրեզետովի, բարխատնի, պոդումենտնի, շոլկովի, կրասիլնի, ժիվոպիսնի։ Բանվորները նույնպես բաժանված էին ըստ գործի բնույթի՝ խառատ, հավաքող, ընտրող, դիպակի, ժապավենի բանվոր-ջուլհակներ, մանածագործներ, ներկարարներ, ջրաղացում աշխատողներ և այլն։ Նրանք ունեին համապատասխան աշակերտներ[16]։ Իրենց ֆաբրիկայի համար Լազարյանները մասնագետներ էին հրավիրում Իրանից և Եվրոպայից։ «Նա (Եղիազար Լազարյանը—Ա. Ս.) մետաքսը և լավագույն ներկարարներին դուրս էր գրում Պարսկաստանից, վարձում էր նաև արտասահմանյան կոլորիստներ, որպեսզի լավ գծագրեր ունենա (գծագրերը փորագրվում էին Մոսկվայում)»[17]։ Երկու տարվա ընթացքում Լազարյաններն այնքան են կատարելագործում իրենց ֆաբրիկայի արտադրանքը, որ 1760 թ. Մանուֆակտուր-կոլեգիայի կողմից մոսկովյան մետաքսի ֆաբրիկաները ստուգող-փորձագետ Օդարն իր զեկուցագրում այն անվանում է «լավագույնը»։ Զեկուցագրում նշված է նաև, որ Մոսկվայի մետաքսագործական ֆաբրիկաներում լավ հիմքերի վրա է դրված դեկորատիվ հարդարանքների (մետաքսի գեղարվեստական ձևավորման) գործը, իսկ տեխնիկական բաց է համարվում այն հանգամանքը, որ «չկա լավ դեսայնշչիկ» (այսինքն՝ նկարիչ-ձևավորող, դիզայներ)[18]։ 1764 թ. ապրիլի 19-ին Եկատերինա կայսրուհուն հասցեագրված մի փաստաթղթում կարդում ենք. «քննությունից պարզվեց, որ՝ Մոսկվայի մոտ գտնվող հայազգի Լազարեների ֆաբրիկան, ինչպես իր հեղինակությամբ, նույնպես և օրինավոր հիմնավորմամբ, մյուս մետաքսի ֆաբրիկաների համեմատությամբ ամենալավագույնն է։ Այստեղ ապրանքները պատրաստվում են մեծ վարպետությամբ, իսկ ֆաբրիկայի տերերն ունեն նաև իրենց նկարիչները»[19]։

Լազարյանների ֆաբրիկան կենտրոնացված ձեռնարկություն էր, ուներ վերանորոգման ու գործիքային սեփական արհեստանոցներ, որտեղ աշխատում էին ատաղձագործներ, դարբիններ ու խառատներ։ Ֆաբրիկայի գործավարներն էին Ելիզավետա Պետրովնա թագուհու կողմից պորուչիկի աստիճան ստացած Վոդիլովն ու Իվկովը։ Առաջինը մասնագիտացած էր թավշի, շտոֆի և դիպակի հաստոցների վրա, իսկ Իվկովը՝ զարգանախշերի։ Նրանց նշանակումները կատարել էր Մանուֆակտուր-կոլեգիան[20]։

Լազարյանների արտադրանքը մեծածախ առևտրով էր սպառվում և բարձր համարում ուներ տոնավաճառներում։ 1780-ական թվականներին Լազարյանների ֆաբրիկան «...համարյա մենակ բամբակի և մետաքսի կտորներ էր մատակարարում Մակարևյան տոնավաճառներին»[21]։ Լազարյանների մետաքսը հարգի էր նաև Նովգորոդի տոնավաճառում։ 1798 թ. Ֆրյանովոյի ֆաբրիկան արտադրում էր երեսուն անուն մետաքսե գործվածք, իսկ 1817 թ. հիսուն տեսակ կտոր։ 1815 թ. Պետերբուրգի թերթերից մեկը գրում էր. «...այ-

---

15 Նույն տեղում, էջ 135։

16 ЦГАДА, ф. 277, оп. 2, ед. хр. 816.

17 Дмитрий Бантыш-Каменский. Словарь достопамятных людей русской земли, ч. III, М., 1836, с. 135.

18 ЦГАДА, ф. 19, ч. 2, ед. хр. 377, лл. 76—77 и об.

19 ЦГАДА, ф. 19. оп. 2, ед. хр 386. с. 76.

20 П. Г. Любомиров, Очерки по истории русской промышленности, Л., 1947, с. 116.

21 Дмитрий Бантыш-Каменский, նշվ. աշխ., էջ 136։ Դա նշանավոր տոնավաճառներից էր Ռուսաստանում, որը տեղի էր ունենում Վոլգայի ձախ ափին, Մակարևյան վանքի մոտ։ Տոնավաճառը հիմնադրվել է XVI դ. և գոյատևեց մինչև 1816 թ.։

ժրմյան տնօրեն Յա. Լ. Լազարեի մասին հաստատապես կարելի է ասել, որ... Ֆաբրիկան այժմ ևս ոչ միայն շարունակում է արտադրել նույն ձևով, արվեստով, այլև խորացնում է հաշողություններն այնպես, որ կարող է իր արտադրանքով փոխարինել արտասահմանյան նույնատիպ նշանավոր մանուֆակտուրաների գործվածքները»[22]։ 1829 թ. ռուսական մանուֆակտուրայի արտադրանքի առաջին ցուցահանդեսի կատալոգի առաջարանում նշված է, որ «քսան տարի առաջ ...միայն Կուպավինյան և պ-րն Լազարևների ֆաբրիկաներն էին փոքր քանակով շտոֆներ, թավիշներ, կերպասներ ու ժապավեններ արտադրում»[23]։

1802 թ. Լազարյանները ձգտում էին Ֆրյանովոյի ֆաբրիկան պետությանը վաճառել[24]։ Ինչպես Հովհաննես ու Քրիստափոր Լազարյաններն էին գրում իրենց բացատրականներում՝ ֆաբրիկան վնաս է բերում, միաժամանակ մեծ է մրցակցությունը[25]։ Սրան պետք է ավելացնել, որ 1812 թ. Հայրենական պատերազմը ևս նկատելի վնաս հասցրեց մերձմոսկովյան կալվածքներին, իսկ պալատն ու ազնվականությունը ի վիճակի չէին արդեն մեծ պատվերներով ապահովել ֆաբրիկան։ Հավանաբար, զգալի զրամ էր պահանջում 1815 թ. Մոսկվայում Լազարյանների հիմնադրած ճեմարանը։ Լազարյանների ժառանգներն արդեն այլ հետաքրքրություններ ունեին[26]։

XIX դ. սկզբին Ռուսաստանում փոխվում էր կտորեղենի պահանջարկը։ Բարոկկո ոճին փոխարինելու եկավ կլասիցիզմը։ Շքեղ կտորներն իրենց տեղը զիջեցին միագույնին։ Մոդայիկ դարձան հարթ տարածքով և զուսպ գույներով կտորները։ Սրանց նպաստեց նաև այն, որ 1804—1805 թթ. լիոնցի ջուլհակ Ժ.—Մ. Ժակքարի հայտնագործած նշանավոր մեքենան հեղաշրջում առաջացրեց տեքստիլ արդյունաբերության մեջ։ Ճիշտ է, սկզբնական շրջանում այն նույնպես գործի էր դրվում ձեռքով, սակայն թելադրում էր գոյություն ունեցող հաստոցների արմատական ձևափոխումներ։ 1826 թ. Ֆրյանովոյի մետաքսի ֆաբրիկան Լազարյաններից գնեցին վաճառական եղբայրներ Պ. և Ն. Ռոգոժինները։ Նրանք առաջինն էին, որ Ռուսաստան ներմուծեցին Ժակքարի մեքենան, խոշոր ծաղիկներով դեկորատիվ կտորներ գործելու համար[27]։

Այսօր դժվար է առանձնացնել Լազարյանների ֆաբրիկայի մետաքսե կտորները, նկատի ունենալով, որ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին Մոսկվայում մոտ քառասուն մետաքսագործական ֆաբրիկա կար, իսկ մեծ քանակությամբ կտորներ ներմուծվում էին նաև եվրոպական ու արևելյան երկրներից։ Հենվելով պատմական ու արվեստաբանական գրականության մեջ հիշատակվող սուղ տվյալների, արխիվային վավերագրերի, ինչպես նաև թանգարաններում պահպանվող մի քանի նմուշների վրա, հնարավոր է դառնում որոշակի եզրահանգումներ կատարել Լազարյանների արտադրած մետաքսե կտորների մասին։

Զաքար Շերիմանի ժամանակ ֆաբրիկան արտադրում էր սահմանափակ քանակով շտոֆներ, թավիշներ, տաֆտաներ և այլն[28], որոնք բնութագրվում էին «ֆրանսիական ոճով» կամ «անգլիական ոճով»։ Լազարյանների ժամանակ ոչ միայն կատարելագործվում է արտադրության պրոցեսը, բազմազան

---

22 «Северная почта», СПб., 1815, № 30, с. 1.

23 «Описание первой публичной выставки российских мануфактурных изделий, бывшей в С. Петербурге 1829 года», СПб., 1829, с. 171.

24 ЦГИА СССР, ф. 18, оп. 2, ед. хр. 384. 1822 թ. Լազարյանները վերջնական մերժում ստանալով, 1823—1825 թթ. ֆաբրիկան երեք անգամ աճուրդի են դնում, բայց դարձյալ չեն կարողանում վաճառել (ЦГАДА, ф. 1252, оп. I, ед. хр. 4380, с. 15—16):

25 ЦГАДА, ф. 1252, оп. 1, ед. хр. 4380, с. 15—16.

26 ЦГАДА, ед. хр. 3006, с. 1—7.

27 А. Савицкая, О шелковых тканях фабрики Лазаревых в собрании Русского музея («Сообщения Государственного Русского музея», т. X, Л., 1974, с. 73).

28 ЦГАДА, ф. 277, оп. 2, ед. хр. 644, с. 33—34 и об.

դառնում մետաքսե կտորների տեսականին, այլև առանձնակի ուշադրություն է դարձվում կտորների գեղարվեստական ձևավորմանը։ Լազարյանների ֆաբրիկայում օգտագործվում է այսպես կոչված բրոշիրովկան (ֆր. brocher-արծաթե, մետաքսե կամ ոսկե թելերով կտոր զարդանախշելու տեխնիկա, որի ժամանակ յուրաքանչյուր զարդի մեջ յուրաքանչյուր գույն հատուկ մաքոքով էր գործվում, և կտորը նմանվում էր ասեղնագործ հյուսվածքի)։ Սա հնարավորություն էր տալիս արտադրել բազմատեսակ գործվածքներ։ Ահա դրանցից մի քանիսը[29]։ Բրոկատ (ֆր. brocart, իտալ. brocure, որ նշանակում է ասեղնագործել)։ Սա ոսկեթել բազմագույն դիպականման կտոր էր։ Գլազետ կամ գրիզետ (ֆր. grisette-կտոր բառից), որի մետաքսյա հենքի վրա զարդանախշը դրվում էր մետաղյա թելերով։ Արտադրվում էր բատիստ նուրբ կտորը, ոսկեթել կոիլիկը, շերտավոր ու ծաղկավոր օբյարը՝ մետաքսաթել հենքով, ոսկեթել և արծաթաթել ասեղնագործ զարդանախշերով (հավանաբար պարսկ. abջուր, ցոլք, փայլ և պարսկ. yaraq -ոսկեթել ընտիր հյուսվածք բառերից)։ Արտադրում էին թավշի բոլոր տեսակները, սարժերոն, կանլե, ամենաթանկը՝ կուշակ, ֆրանսիական կամ անգլիական կտորներից ընդօրինակված նախշերով գամմասոներ, տաֆտա՝ մետաքսե դիպակ կամ նրբադիպակ (պարսկ. tafte-թաֆթե՝ մաքուր մետաքս), սա երկկողմանի էր, ուներ տարատեսակներ, ինչպես օրինակ՝ կանաուսը (դանաուզը)։ Մոսկվայի պատմության պետական թանգարանում պահպանվել է այդ ժամանակվա դիպակե թավշի (պարչովի բարխատ) մի կտոր, որի հիմքը հաստ թելերից է, ոսկեթել է, ունի ընտիր փայլ, իսկ բազմագույն զարդանախշերը կտրտված և չկտրտված խավ ունեն։ Այսպիսի թավիշներ արտադրում էին Բոգորոդսկի գավառում, այսինքն, մետաքսագործական ֆաբրիկաների կենտրոնացման այն վայրում, որտեղ Լազարյանների ֆաբրիկան էր։ Լազարյանների ֆաբրիկան արտադրում էր նաև գրոդետուր (ֆր. gros de Teurs -մետաքսե կտոր), որի թեզանը (ուտոկը) հենքից հաստ էր, խիտ հյուսվածք ուներ և նման էր տաֆտայի։ Պիրյուենը (ֆր. piruenne-ից) ոսկեթել ծաղիկներով ու տերևներով բազմագույն մետաքս էր, սարժա, կրեպ՝ չեռացրած մետաքսե թելերից կտոր ֆլյոր (ֆր. étoffe à fleurs-ծաղկավոր կտոր)՝ շղարշե թափանցիկ կտոր, լյուսուրին՝ ողորկ մետաքսե կտոր, մուար, ֆալ, այուլ, սվիսաուն, ֆուլյար, զազ տարբեր տեսակի բարակ, թեթև, թափանցիկ ընտիր կտորներ։ Դեկորատիվ կտոր էր մուխոյարե դեբուրեսը. որը հնագույն ասիական բամբակյա կտոր էր, բրդի և մետաքսի խառնուրդով, բյուրեսը (ֆր. beurrett-կոպիտ մետաքս), շտոֆը (գերմ. stoff-կտոր, հյուսվածք)։ Այսպես էին անվանվում միագույն կամ տարբեր երանգներով գործվածքները, երբեմն՝ ոսկեթել հավելվածով։ Դեկորատիվ կտորներ էին ծանր շտոֆները, որոնք ունեին զարդանախշեր (ուբորնի շտոֆի՝ ուբոր՝ զարդարանք բառից)։ Սրանք հարթ ֆոնով էին, մեծ զարգանախշերով, օգտագործվում էին պատի հարթությունը կամ կահույքը ձևավորելու համար։ Նույն նպատակով արտադրվում էր կահույքի կամ «բուրբոնական» անունը կրող կտորը։ XIX դ. սկզբին Լազարյաններն արտադրում էին շքանշանների ժապավեններ (Գեորգիևսկի, Վլադիմիրսկի և այլ շքանշանների համար)[30]։ Այս ամենից մի քանի օրինակներ են պահպանվել, որոնց շնորհիվ հնարավոր է արժեքավորել Լազարյանների ֆաբրիկայի արտադրանքի գեղարվեստական կողմը։ XVIII դ. Ռուսաստանում մեծ հետաքրքրություն կար դեպի կոնկրետ, ռեալիստական զարդանախշը. ծաղիկներ, մրգեր, բնանկարչական տեսարաններ, մարդկանց և կենդանիների պատկերումներ։ Սրանք խիստ նատուրալիստական էին գործվում։ Ոսկեթելի կամ արծաթաթելի ներմուծումը զարդանախշի մեջ հնարավոր էր դարձնում ծավալի և լուսաստվերի պատրանքի առավել շեշտադրումը։ Լազարյանների կտորների հարդարանքում նկատելի են և՛ ֆրանսիական, և՛ պարսկական կտորների զարդանախշային ու գունային զուգորդումներ։

[29] ЦГАДА, ф. 1252, оп. 1, ед. хр. 3006, 3018, 3014, ф. 277, ед. хр. 631, 816, 714 и т. д.

[30] ЦГАДА, ф. 1258, оп. 1, ед. хр. 3014, с. 24.

Լենինգրադի պետական ռուսական թանգարանի ֆոնդերում պահպանվել է Լազարյանների ֆաբրիկայի դրոշմով երեք մետաքսյա կտոր[31]։ Դրանցից մեկը սարաֆան է, որի վրա հայելու կրկնակի անդրադարձումով գործված են «Ф.Д.Е.Л.Л.В.С.Ф.» տառերը։ Նույնը գործված է մեկ այլ կտորի վրա, սակայն երկու խմբով. «Ф.Д.Е.Л.» և «Л.В.С.Ф»։ Սրանք վերծանվում են այսպես. «Фабрика дворянина Екима Лазаревича в селе Фрянове»: Երրորդ օրինակի վրա գործված է «Ф.К.С.И.Л.Л.В.С.Ф.», որն ընթերցվում է. «Фабрика коллежского советника Ивана Лазаревича Лазарева в селе Фрянове»[32]։ Այս երրորդ կտորը գործված է 1786 թ. հետո, երբ Իվան Լազարևը Կոլեգիական խորհրդականի աստիճան ստացավ, իսկ առաջին երկուսը՝ այդ թվականից առաջ։ Մեկ այլ կտոր պահպանվել է Պավլովսկի պալատ-թանգարանում, որի վրա գործված դրոշմը վերծանել է գիտական աշխատող Գ. Սկերլետովան։ Այն է. «Ф.С.С.И.Л.Л.В.С.Ф.»—«Фабрика статского советника Ивана Лазаревича Лазарева в селе Фрянове»[33].

Լենինգրադի ռուսական պետական թանգարանի վերը հիշատակված կտորներից մեկն ունի հնչեղ շագանակագույն ֆոն, մանր աստղածաղիկներից կազմված ծաղկեփնջեր, ալիքավոր, կետային լուծումներ ունեցող վարդականման զարդանախշեր (ինվ. № ТК 556): Մյուս կտորը, որից կանացի բաճկոն է կարած (շուգայ), հարթ ֆոն ունի, նման է ռեպսի, զարդանախշերը երկարուկ տերևներից, մեխակներից և զանազան ծաղկաթերթիկներից կազմված ծաղկեփնջեր են՝ ծայրերը ժապավենով կապված (ինվ. № ТК 533): Կտորի բրոշիրովկայում նաև խավոտ թել է օգտագործված, որից գործվածքը շքեղ տեսք է ստացել։ Երրորդ կտորը (ինվ. № ТК 557) կարմրա-շագանակագույն ֆոն ունի, ցանցկեն ժանյակներ, ռեալիստական գործքով արված մանր և մեծ վարդերի ընտիր ծաղկեփնջեր, որոնք իրար են կապվում ուլունքաշարերի ոլորապտույտ շղթաներով։ Այս կտորի ձևավորումը շատ ավելի կենսուրախ է, ունի խորություն և ծավալի զգացողություն։ Նույն թանգարանում պահպանվում են յոթ գլխաշոր, որոնք գործվել են XIX դ. սկզբին, Լազարյանների ֆաբրիկայում. դրանք ունեն վարդագույն, բաց-շագանակագույն, երկնագույն և բաց-կանաչ ֆոն, իսկ դեկորով մոնումենտալ են և գունագեղ։

Լազարյանների ֆաբրիկայի գործվածքներին բնորոշ են զարդանախշերի մեծ հատվածներ։ Զարդանախշի ռապորտը (հիմնական հատվածը, որը հետագայում անընդհատ կրկնվում է) դաշտի վրա մեծ տարածք է գրավում։ Զարդանախշերն ընդօրինակվում էին Իրանից, Հնդկաստանից, Չինաստանից և Թուրքիայից բերված կտորներից։ Ինչպես նշում է գործվածքների մասնագետ Ն. Սոբոլևը, «ռուսական կտորների նկարազարդումներում արևելյան կտորները գերիշխում էին այնքան ժամանակ, քանի դեռ արևելյան արտահանման շահերը մեր արդյունաբերության համար առաջնահերթ էին»[34]։

Լազարյանների ճաշակին հոգեհարազատ էին արևելյան կտորների զարդանախշային մոտիվները, միաժամանակ, նրանք զգում էին եվրոպական զարդանախշային տարրերի փոխառնման անհրաժեշտությունը, ելնելով տեղական ճաշակի պահանջներից։

Գրավոր վկայություն է պահպանվել այն մասին, որ Ֆրյանովոյի ֆաբրիկան Եղիազարի որդի Հովհաննեսը և նրա հետնորդները «այնպիսի կատարելության հասցրին, որ թագավորական մեծության ցանկությամբ, պայծառափայլ իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինի և իշխան Զուբովի պատվերով, Պետերբուրգի պալատների համար մետաքսե գերազանց կտորներ և

---

31 Ռուսաստանում գործվածքների վրա դրոշմներ է տեղադրվել 1747 թվականից։

32 А. Савицкая, նշվ. աշխ., էջ 75։

33 Б. А. Шелковникова и Т. Н. Яковлева, Декоративное и прикладное искусство первой половины XIX века («История русского искусства», т. VIII, кн. II, М., 1964, с. 553).

34 Н. Н. Соболев, Очерки по истории украшения тканей, М., 1934, с. 412.

ֆրանսիականի նման պաստառներ էին պատրաստում, որոնցով ծածկվում էին Ս. Պետերբուրգի պալատների շատ դահլիճներ (Զմեռային, Տավրիկյան)։ Արտադրում էին նաև այլ տեսակի թանկ և հրաշալի մետաքսյա կտորներ, որոնք թագուհու կողմից նվեր էին ուղարկվում օտար արքունիքներ»[35]։ Նկատի ունենալով այս կարևոր հիշատակությունը, հավանական պետք է համարել, որ էջմիածնի տաճարի թանգարանում պահպանվող մի շուրջառի կտորը նույնպես Ֆրյանովոյի ֆաբրիկայից է։ Շուրջառը (գործվածք № 506, երկ. 337, ուսերի լայնքը 160 սմ) բրոշիրովկա է, ունի ընտիր ոսկեկար դաշտ, որի վրա դեղին, կարմիր, կանաչ, երկնագույն և կապույտ ծաղկեփնջեր են գործված։ Կտորն այնքան ընտիր ու նուրբ հանգույցներ ունի, որ թվում է թե ծաղկեփնջերը ուռուցիկ ասեղնագործությամբ են արված։ Շուրջառի աստառի կռնակին ամբացված է կարմիր մետաքս, որի վրա ոսկեթել ասեղնագործված է. «Շուրջառս այս է Յիշատակ մեծազօր կայսերն Ուռուսաց Եկատերինէ ամենափառաւոր թագուհւոյն եւ ա(ստուա)ծապարգև որդւոյն իւրոյ Պաւլ Պետրովիչին, զոր առաքեցաւ Մեծն կաթողիկոսին Երեւանցւոյն՝ վասն շատ սիրոյ. ի թուոջ Փրկչին ՌՁԿԸ»։ Ինչպես տեսնում ենք, Եկատերինա II կայսրուհին 1768 թ. շուրջառը նվեր է ուղարկել կաթողիկոս Սիմեոն Երևանցուն։ Լազարյանների ֆաբրիկայում ընդունված է եղել հայերեն արձանագրություններ գործել եկեղեցական հանդերձանքի վրա։ Օրինակ. 1820—1822 թթ. Խաչատուր Լազարյանը Մոսկվայի և Ղրիմի հայկական եկեղեցիներին է նվիրում 17 կտոր հանդերձանք (շուրջառներ, շապիկներ, բազպաններ, փորուարներ և այլն)։ Շուրջառներից մեկի վրա գործելու համար գրաֆիկական ընտիր տառերով կազմվել է հայերեն արձանագրության տեքստի երեք տարբերակ[36]։

Պետական հովանավորության տակ էր գտնվում Պետերբուրգի շալերի ֆաբրիկան, որն այն ժամանակ ծաղկում էր ապրում՝ ունենալով եվրոպական երկրներից հրավիրված ընտիր վարպետներ ու նկարիչներ, սակայն Լազարյանները նույնպես մեծաքանակ դեկորատիվ շտոֆների ու մետաքսի պատվերներ էին ստանում պալատի կարիքների համար։ Դրանցից մեկի արխիվային գործն ունի հետևյալ տիտղոսաթերթը. «Реэстр обоям сделанным для Московского Екатеринского дворца на (Фряновской) шелковой фабрике»[37]. Գործում 22 տեսակի կտորներ են հիշատակվում. «...երկնագույն հենքի վրա թռչուններ», «մորեգույն հենքի վրա ծաղկեփնջեր», «երկնագույն ատլասի վրա փոքր լանդշաֆտներ», «մորեգույն ատլասի վրա կանաչ ծաղիկներ», «դեղին ֆոնի վրա սպիտակ լանդշաֆտներ», «Շտոֆ. ծաղկե զամբյուղով այգեպան», «մարգագետին սիրամարգերով», «վարագույրի ատլաս սիրամարգերով» և այլն։ Մոսկվայի Եկատերինյան պալատը կառուցվել է 1771—1776 թթ., որի համար հատուկ պատվերով 10383 3/4 արշին կտորներ են գործվել Ֆրյանովոյում։ Այն Պետերբուրգ է առաքվել 1775 թ. ապրիլի 30-ին[38], 1810 թ. առաջարկվել է վերականգնել և արտադրել համարյա նույն զարդանախշերով կտորներ, որն իրագործվում է։ 1815 թ. Լազարյաններին նվիրված մի հոդվածում հայտնվում է, որ Ներքին գործերի մինիստրությունը ստացել է Լազարյանների մետաքսի ֆաբրիկայի «նմուշների մեծագույն հավաքածուն», որոնց մեջ տեսնում ենք «սիրամարգերի պատկերումներով պաստառապատման մետաքսի կտորի հատվածը։ Միայն այս օրինակը բավական է, որպեսզի համոզվենք այս ֆաբրիկայի ինչպես որակի, նույնպես և նկարչության արվեստի առավելության մեջ»[39]։

---

35 «Собрание актов...», ч. II, 1838, с. 298—299: *1820—1822 թթ. Լազարյանների ֆաբրիկայի պատվիրատուն էր կոմս Ա. Ա. Արակչեևը* (ЦГАДА, ф. 880, оп. 4, ед. хр. 9, с. 25):

36 ЦГАДА, ф. 1252, оп. I, ед. хр. 3014, с. 130 *(«Ծուցակ սուրբ եկեղեցիոյն Խրիմայ նուիրեալ զգեստոց որք զետեղեալ են՝ ի միուսում արկեղ»).*

37 ЦГИА СССР, ф. 880, оп. 4, ед. хр. 1.

38 *Նույն տեղում։*

39 «Северная почта», 1815, № 30, с. 1.

Պավլովսկի պալատի դեկորատիվ կտորը վառ-գեղին ատլաս է, ոսկի մետաքսի և թավշի խավով գործված զարդանախշեր, խաղողի ողկույզներ, իսկ նրբաճաղ վանդակների մեջ հյուսված են կաքավներ։ Նույն կտորի տարբերակը գործվել է Ցարսկոյե Սելոյի Եկատերինյան մեծ պալատի Պրեդխորնի սենյակի համար, որտեղ կաքավները փոխարինված են փասիաններով։ Կտորի տարբեր մասերում գործված են շուլհակների անունները. Իվան Բելի, Նիկոլայ Դյաչկով, Վասիլի Նիկիֆորով, Իվան Պաուկ (անունը ստացել է հյուսվածքի ընտիր մասնագետ լինելու համար)։ Վերոհիշյալ վարպետների գործը պետք է համարել նաև Պետերգոֆի Մեծ պալատի «Կուրոպատոչնայա դոստիննայա» կոչված սենյակի պատին ամրացված դեկորատիվ կտորը։ Սրա ծաղիկները մեծ են, գործված են նաև ցողուններ, ծաղկեպսակներ, որոնց մեջ տեղադրված են զույգ և երեքական կաքավներ[40]։ Լազարյանները հատուկ կտորներ են գործել նաև Պետերբուրգի Կոնոգվարդեյսկի տան կամ, ինչպես հիշատակվում է պատմության մեջ, Տավրիկյան պալատի համար[41]։ Այն կառուցվել է 1783—1790 թթ., իսկ մեկ տարի անց Եկատերինա II այն նվիրեց Պոտյոմկինին՝ Իզմայիլի գրավման առթիվ։ Պալատի Դիվանների սենյակի մասին (այսպիսի սենյակ առաջին անգամ ներմուծեց Գ. Պոտյոմկինը) պատմում են, որ տպավորությունը հասնում էր «ասիական կախարդական հեքիաթի բարձրագույն աստիճանին... Կահույքը պաստառապատված էր արծաթյա և վարդագույն գործվածքով, նույն ձևով ծածկված էր հատակը», իսկ «դահլիճի մուտքի մոտ, դռների երկու կողմերից օթյակներ էին պատրաստված, որոնք պաստառապատված էին շքեղագույն կտորներով»[42]։ Լազարյանների մետաքսով էին պատած նաև Զմեռային պալատի որոշ դահլիճների պատերը, որոնք այրվեցին 1837 թ. մեծ հրդեհի ժամանակ[43]։

XVIII դ. վերջում և XIX դ. սկզբին Ռուսաստանում ընդունված գործվածքների ընտիր օրինակներ են պահպանվել զգեստների ձևով կամ գեղանկարչական ստեղծագործություններում[44]։ Լազարյանների կտորներն ունեն արևելյանի ձգտող մի երանգ։ Դա արտահայտվում է ոչ միայն զգեստի անբաժան մասը կազմող արևելյան շալերի միջոցով (նույնպես արտադրվում էին Ֆրյանովոյում), այլ հենց կտորի արևելյան զարդանախշով, նրա գունային կառուցվածքով։ Ռուսաստանի մետաքսի մյուս ֆաբրիկաների կտորների ձեվավորումներում գերակշռում էին եվրոպական մետաքսի զարդանախշերը։ Պատահական չէ, որ երբեմն այն անտրամաբանական հետևանք էր ունենում։ Օրինակ, 1829 թ. ռուսական մանուֆակտուրայի առաջին ցուցահանդեսի կատալոգի առաջաբանում կարդում ենք. «Յուրաքանչյուր պետություն ունի իր առանձնահատկությունները, իր պատահականություններն ու իր փառքը։ Պետք է կարողանալ դրանցից օգտվել։ Այդ ժամանակ մենք կտեսնենք, որ մյուս ժողովուրդները, այսօրվա մեր ուսուցիչները կսկսեն մեզանից փոխառնել։ Մենք մի ոտքով կանգնած ենք Ասիայում, մի երկրում, որը ոչնչով նման չէ զառամյալ Եվրոպային։ Այնտեղ որքա՜ն հազվագյուտ, անսովոր և ինքնատիպ երևույթներ կան։ Զուգակցենք ասիական ճաշակը եվրոպականի հետ, և կծնվի բոլորովին նորը, ոչ պակաս գրավիչը»[45]։ Հենց այդ գործն էին անում Լազարյանները։ Նրանք իրենց մետաքսագործական մեծ գործունեությամբ արևելյանը շաղկապեցին տեղական պահանջներին։

---

40 А. Г. Стемпаржицкий, Декоративные ткани в русском интерьере, Л., 1958, илл. 14.

41 «Собрание актов...», ч. II, с. 299.

42 М. И. Пыляев, Старый Петербург, СПб., 1887, с. 393, 310.

43 «Собрание актов...», ч. II, с. 298—299; «Исторический очерк Лазаревского института восточных языков», М., 1863, с. 6—7.

44 Т. Т. Коршунова, Костюм в России XVIII—начала XIX века, Л., 1979.

45 «Описание первой публичной выставки российских мануфактурных изделий, бывшей в С. Петербурге 1829 года», с. 181—182.

# УЧАСТИЕ ЛАЗАРЯНОВ В РАЗВИТИИ РУССКОГО ШЕЛКОТКАЧЕСТВА

АШОТ СТЕПАНЯН

**Резюме**

В русско-армянских сношениях большую роль сыграл род Лазарянов. В посвященных ему трудах внимание исследователей сконцентрировано на просветительских интересах Лазарянов, их предприимчивости в области промышленности, а также их активности в национально-освободительной борьбе армян. Значителен вклад Лазарянов в развитии шелковой промышленности России. Шелковая фабрика Лазарянов в селе Фряново Богородского уезда Московской области, была наилучшей среди подобных фабрик России конца XVIII—начала XIX вв. Более семидесяти лет она производила около пятидесяти видов шелков, бархата и других тканей, не только получивших признание на Макарьевской и Новгородской ярмарках, но и по своим высоким техническим и художественным достоинствам соперничавших с ввозимыми в Россию шелками из стран Востока и Европы.